



Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 6

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Քննաթերթ

	Թեմա	Միավոր
Խնդիր 1	Բազմակի ընտրության հարցեր	20
Խնդիր 2	Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն - ՖՀՄՍ 10	20
Խնդիր 3	Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում. ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն - ՀՀՄՍ 1, ՀՀՄՍ 7	20
Խնդիր 4	ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 12, ՀՀՄՍ 37	25
Խնդիր 5	ՖՀՄՍ 16	15
Ընդամենը		100

Հուլիս 2026

խնդիր 1.

Սույն խնդրի ներքո յուրաքանչյուր ենթահարցին տրվում է 2 միավոր:

1. Հետևյալներից ո՞րը ՖՀՄՍ Մեկնաբանությունների կոմիտեի պարտականությունը չէ:
 - Ա Մեկնաբանել ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառությունը
 - Բ Աշխատել անմիջականորեն հաշվապահական հաշվառման ազգային ստանդարտներ սահմանող մարմինների հետ՝ ՖՀՄՍ-ների հետ ներդաշնակելիություն ապահովելու համար
 - Գ Տրամադրել ուղեցույցներ ֆինանսական հաշվետվություններին առնչվող այն խնդիրների վերաբերյալ, որոնք հատուկ կերպով հասցեագրված չեն ՖՀՄՍ-ներում
 - Դ Հրապարակել մեկնաբանությունների նախագծեր հանրային քննարկման համար

2. Հետևյալներից որո՞նք կդիտարկվեն որպես «Պեդո» ընկերության դուստր ընկերություն 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:
 - (1) 2025թ. մարտի 1-ին «Զեբո» ընկերության կանոնադրական կապիտալի բաժնետոմսերի 60%-ի ձեռքբերումը: «Զեբո» ընկերության գործունեությունը զգալիորեն տարբերվում է «Պեդո» խմբի մնացած ընկերությունների գործունեությունից:
 - (2) 2025թ. նոյեմբերի 1-ին «Ուրարտու» ընկերության կանոնադրական կապիտալի բաժնետոմսերի 70%-ը ձեռք բերելու առաջարկը: Բանակցությունները վերջնականապես ստորագրվել և հաստատվել են 2026թ. հունվարին :
 - (3) 2025թ. դեկտեմբերի 31-ին «Սևան» ընկերության կանոնադրական կապիտալի բաժնետոմսերի 45%-ի ձեռքբերումը: «Պեդո» ընկերությունը կարող է նշանակել «Սևան» ընկերության տնօրենների խորհրդի տասը անդամներից երեքին:
 - Ա միայն 1-ը
 - Բ 2-ը և 3-ը
 - Գ միայն 3-ը
 - Դ 1-ը և 2-ը

3. Հետևյալ երկու խնդիրները վերաբերում են «Սուլֆուր» ընկերության հանքարդյունաբերական գործունեությանը:
 - **Իրավիճակ 1.** «Սուլֆուր» ընկերությունը սկսել է շահագործել նոր հանքավայր 2024թ. հունվարին՝ կառավարության կողմից տրված հնգամյա լիցենզիայի ներքո, որը պահանջում էր «Ստվեր» ընկերությունից իրականացնել տարածքի բարեկարգում (լանդշաֆտի վերականգնում) հանքարդյունահանման դադարեցումից հետո՝ 200,000 հազար դրամ գնահատված արժեքով :
 - **Իրավիճակ 2.** 2025թ. ընթացքում «Սուլֆուր» ընկերության հանքարդյունաբերական գործունեությունը պատճառ է դարձել աղտոտման պետական պատկանելիության հարակից հողատարածքում: Չկա որևէ օրենք, որը ընկերությունից կպահանջեր վերացնել այդ վնասը, այնուամենայնիվ, «Սուլֆուր»

ընկերությունն ունի հրապարակված բնապահպանական քաղաքականություն, որը ներառում է հավաստիացումներ, որ ընկերությունը կանի դա: Վնասի վերացման գնահատված արժեքը կազմում է 2,000,000 հազար դրամ:

Համաձայն ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ստանդարտի՝ հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ «Սուֆուր» ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

- Ա Պահուստ է պահանջվում թե՛ 1-ին, և թե՛ 2-րդ իրավիճակների գծով ծախսերի համար:
- Բ Թե՛ 1-ին, և թե՛ 2-րդ իրավիճակները պահանջում են միայն բացահայտում:
- Գ 1-ին իրավիճակի գծով ծախսի համար պահանջվում է պահուստ, իսկ 2-րդ իրավիճակը պահանջում է միայն բացահայտում:
- Դ 1-ին իրավիճակը պահանջում է միայն բացահայտում, իսկ 2-րդ իրավիճակը պետք է անտեսվի:

4. Ընկերությունը որոշել է փոխել իր մաշվածության հաշվարկման մեթոդը՝ սարքավորման օգտագործման մոդելն ավելի լավ արտացոլելու նպատակով: Հետևյալներից ո՞րն է ճիշտ արտացոլում, թե ինչ է իրենից ներկայացնում այս փոփոխությունը և ինչպես այն պետք է կիրառվի:

- Ա Դա հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն է և պետք է կիրառվի առաջընթաց կերպով
- Բ Դա հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն է և պետք է կիրառվի հետընթաց կերպով
- Գ Դա հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխություն է և պետք է կիրառվի հետընթաց կերպով
- Դ Դա հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխություն է և պետք է կիրառվի առաջընթաց կերպով:

5. 2026թ. մարտի 31-ի դրությամբ «Զուռնա» ընկերության ֆինանսական ակտիվների կազմում ներառված են վերջերս ձեռք բերված հետևյալ երկու ներդրումները:

- **Ներդրում 1.** «Հարիսա» ընկերության թողարկված բաժնետիրական կապիտալի 10%-ը: Այս բաժնեմասը ձեռք է բերվել որպես երկարաժամկետ ներդրում, քանի որ «Զուռնա» ընկերությունը ցանկանում է հանդես գալ որպես «Հարիսա» ընկերության ակտիվ բաժնետեր:
- **Ներդրում 2.** «Լուսնա» ընկերության թողարկված բաժնետիրական կապիտալի 10%-ը: Այս բաժնեմասը ձեռք է բերվել առևտրային նպատակներով, և «Զուռնա» ընկերությունն ակնկալում է վաճառել այս բաժնետոմսերը մոտ ապագայում:

Այս բաժնեմասերից և ոչ մեկը «Զուռնա» ընկերությանը նշանակալի ազդեցություն չի տալիս ներդրվող օբյեկտների նկատմամբ: Հնարավորության դեպքում «Զուռնա» ընկերության տնօրենները ցանկանում են խուսափել իրական արժեքի փոփոխությունները ֆինանսական արդյունքներին (շահույթին կամ վնասին) վերագրելուց, որպեսզի նվազեցնեն հաշվետու շահույթների տատանողականությունը:

Ինչպե՞ս պետք է այս ներդրումների իրական արժեքի փոփոխությունները ներկայացվեն «Զուռնա» ընկերության՝ 2026թ. մարտի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվություններում :

- Ա Շահույթում կամ վնասում՝ երկու ներդրումների համար էլ
- Բ Այլ համապարփակ արդյունքում՝ երկու ներդրումների համար էլ
- Գ Շահույթում կամ վնասում՝ 1-ին ներդրման համար, և այլ համապարփակ արդյունքում՝ 2-րդ ներդրման համար
- Դ Այլ համապարփակ արդյունքում՝ 1-ին ներդրման համար, և շահույթում կամ վնասում՝ 2-րդ ներդրման համար

6. 2025թ. հունվարի 1-ին «Շրիշակ» ընկերությունը կնքել է անխզելի չորս տարի ժամկետով վարձակալության պայմանագիր՝ պատճենահանող սարք վարձակալելու համար: Վարձակալության պայմանագրի պայմաններն էին.

Վարձակալության վճար	տարեկան 250,000
Վարձակալության սկզբում ստացված խրախուսման գումար	50,000
Ակտիվի օգտակար ծառայության ժամկետ	ութ տարի

Որքա՞ն է կազմում այս վարձակալության գծով ծախսի ճանաչումը «Շրիշակ» ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

- Ա 187,500
- Բ 200,000
- Գ 237,500
- Դ 262,500

7. «Տիտան» ընկերությունը գործում է զարգացող շուկայում՝ արագ աճող տնտեսությամբ, որտեղ գները հաճախակի բարձրանում են : Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ, երբ այս տեսակի շուկայում օգտագործվում է պատմական (սկզբնական) արժեքով հաշվառումը՝ ընթացիկ արժեքով հաշվառման համեմատությամբ :

- (1) Ներգրավված կապիտալը, որը հաշվարկվում է պատմական արժեքով, թերագնահատված է՝ ընթացիկ արժեքով հաշվարկված ներգրավված կապիտալի համեմատ :
- (2) Պատմական արժեքով հաշվարկված շահույթները գերագնահատված են՝ ընթացիկ արժեքով հաշվարկված շահույթների համեմատ :
- (3) Ներգրավված կապիտալը, որը հաշվարկվում է պատմական արժեքով, գերագնահատված է՝ ընթացիկ արժեքով հաշվարկված ներգրավված կապիտալի համեմատ :
- (4) Պատմական արժեքով հաշվարկված շահույթները թերագնահատված են՝ ընթացիկ արժեքով հաշվարկված շահույթների համեմատ :

Ա 1-ը և 2-ը

Բ 1-ը և 4-ը

Գ 2-ը և 3-ը

Դ 3-ը և 4-ը

8. «Մամիկոն» ընկերությունը ձեռք է բերել «Դերիկո» ընկերության 80%-ը 2025թ. հոկտեմբերի 1-ին : Այս ամսաթվին «Դերիկո» ընկերության պաշարների մի մասի հաշվեկշռային արժեքը 300,000 էր, սակայն իրական արժեքը կազմում էր 400,000 : Մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ը այս պաշարների 70%-ը վաճառվել էր «Դերիկո» ընկերության կողմից : 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երկու ընկերությունների առանձին ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները ցույց են տալիս հետևյալը.

Հազ. դրամ	«Մամիկոն» ընկերություն	«Դերիկո» ընկերություն
Պաշարներ	1,625	970

Որքա՞ն կլինի պաշարների արժեքը «Մամիկոն» ընկերության համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ա 2,625,000

Բ 2,665,000

Գ 2,565,000

Դ 2,619,000

9. «Ռոստրիֆ» ընկերությունը 2025թ. հունվարի 1-ին ձեռք է բերել իր միակ դուստր ընկերության՝ «Մանդակ» ընկերության սեփական կապիտալի բաժնետոմսերի 70%-ը : Ձեռքբերման պահին «Մանդակ» ընկերությունում չվերահսկող բաժնեմասի իրական արժեքը 5.5 մլն դրամ էր : Այդ ամսաթվին «Մանդակ» ընկերության զուտ ակտիվների իրական արժեքները հավասար էին իրենց հաշվեկշռային արժեքներին, բացառությամբ մի շենքի, որի իրական արժեքը 7.5 մլն դրամով գերազանցում էր իր հաշվեկշռային արժեքին և ուներ 30 տարի մնացորդային օգտակար ծառայության ժամկետ : 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում «Մանդակ» ընկերությունն ապրանքներ է վաճառել «Ռոստրիֆ» ընկերությանը, ինչի արդյունքում տարեվերջին պաշարներում առաջացել է 2,750,000 դրամի չիրացված շահույթ : «Մանդակ» ընկերության հարկումից հետո շահույթը 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար կազմել է 16 մլն դրամ :

Ի՞նչ գումար կներկայացվի որպես չվերահսկող բաժնեմաս «Ռոստրիֆ» ընկերության համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ա 9,475,000

Բ 7,475,000

Գ 9,550,000

Դ 9,400,000

10. Երբ առաջանում է օգուտ ձեռքբերումից (բացասական գույքի), ՖՀՄՍ 3 «Բիզնեսի միավորումներ» ստանդարտը պահանջում է, որ կազմակերպությունն ամենից առաջ վերանայի միավորման գծով փոխանցված հատուցման, ինչպես նաև ձեռք բերված ակտիվների ու ստանձնած պարտավորությունների չափումները:

Երբ բացասական գույքի լր հաստատվում է, ինչպե՞ս է այն այնուհետև ճանաչվում:

- Ա Այն կրեդիտագրվում է անմիջապես չբաշխված շահույթին
- Բ Այն կրեդիտագրվում է շահույթին կամ վնասին (եկամուտ է ճանաչվում)
- Գ Այն դեբետագրվում է շահույթին կամ վնասին (ծախս է ճանաչվում)
- Դ Այն պակասեցվում է դրական գույքի լից

(Ընդամենը՝ 20 միավոր)

Խնդիր 2.

01.01.2025թ. Մայր կազմակերպությունը (այսուհետ՝ Մ) ձեռք բերեց Դուստր կազմակերպության (այսուհետ՝ Դ) 2,400,000 հատ սովորական բաժնետոմս:

Որպես ձեռք բերված բաժնետոմսերի դիմաց հատուցում Մ-ն Դ-ին յուրաքանչյուր բաժնետոմսի համար փաստացի վճարել է 500 դրամ: Բացի այդ, որպես ձեռք բերված սովորական բաժնետոմսերի դիմաց հատուցում իրականացվեց Մ-ի և Դ-ի բաժնետոմսերի փոխանակում՝ Մ-ի մեկ սովորական բաժնետոմսը Դ-ի չորս սովորական բաժնետոմսի դիմաց հարաբերակցությամբ, ինչպես նաև հետագայում պետք է վճարվի Մ-ի շահութաբերությունից կախված պայմանական հատուցում, որի իրական արժեքը բաժնետոմսերի ձեռքբերման ամսաթվի դրությամբ գնահատվում է 1,500 միլիոն դրամ:

Սովորական բաժնետոմսերի ձեռքբերման ամսաթվի դրությամբ Դ-ի կուտակված շահույթը կազմում էր 1,380 միլիոն դրամ: Մ-ի մեկ սովորական բաժնետոմսի իրական արժեքը կազմում էր 4,000 դրամ, իսկ Դ-ինը՝ 2,000 դրամ:

Ստորև ներկայացվում է 31.12.2025թ. դրությամբ Մ-ի և Դ-ի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 31.12.2025թ. դրությամբ

<i>մլն դրամ</i>	Մ	Դ
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	16,914	6,000
Ներդրումային գույք	840	-
Տրամադրված փոխառություններ	2,466	900
Ներդրում Դ-ում	3,600	
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	23,820	6,900
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	4,500	2,550
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10,500	3,300
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,194	750
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	16,194	6,600
Ընդամենը ակտիվներ	40,014	13,500
Սեփական կապիտալ		

Կանոնադրական կապիտալ (սովորական բաժնետոմսեր՝ 1,000 դրամ անվանական արժեքով)	18,000	3,000
Բաժնետոմսերի հավելագին	2,574	1,200
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	2,700	-
Զբաղիված շահույթ	9,240	5,400
Ընդամենը սեփական կապիտալ	32,514	9,600
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Ստացված փոխառություններ	450	750
Պահուստ	720	-
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	894	150
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	2,064	900
Ընթացիկ պարտավորություններ		
Շահաբաժինների գծով պարտավորություն	3,600	1,800
Ստացված փոխառություններ	636	450
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,200	750
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	5,436	3,000
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	40,014	13,500

Միաժամանակ հայտնի է հետևյալ տեղեկատվությունը.

1. Մ-ի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես Դ-ում ներդրում արտացոլված են միայն հետևյալ գումարները՝
 - բաժնետոմսերի ձեռքբերման համար փաստացի վճարված գումար, և
 - հատկացված բաժնետոմսերի ձեռքբերման պահի դրությամբ իրական արժեք:
2. Դ-ի ակտիվների հաշվեկշռային արժեքների և իրական արժեքների միջև առկա էին միայն հետևյալ տարբերությունները.

ա) Ձեռքբերման ամսաթվի դրությամբ հողամասերի հաշվեկշռային արժեքը 150 միլիոն դրամով գերազանցում էր դրանց իրական արժեքին, իսկ հաշվետու ամսաթվով հողամասերի հաշվեկշռային արժեքի գերազանցումը իրական արժեքի նկատմամբ կազմում էր ընդամենը 60 միլիոն դրամ:

բ) Ձեռքբերման ամսաթվի դրությամբ մեքենաների և սարքավորումների իրական արժեքը 240 միլիոն դրամով գերազանցում էր դրանց հաշվեկշռային արժեքին:

Միաժամանակ, հայտնի է, որ այդ մեքենաները և սարքավորումները ձեռքբերումից հետո նախատեսվում է օգտագործել ևս 8 տարի:

գ) Ձեռքբերման ամսաթվի դրությամբ պաշարների իրական արժեքը 180 միլիոն դրամով գերազանցում էր դրանց հաշվեկշռային արժեքին:

Միաժամանակ, հայտնի է, որ այդ պաշարները հաշվետու ամսաթվի դրությամբ ամբողջովին սպառվել են:

3. Համախմբված ֆինանսական հաշվետվություններում չվերահսկվող բաժնեմասը չափվում է համամասնությամբ:

4. Հաշվետու ամսաթվի դրությամբ գուդվիլն արժեզրկված է 20 %-ով:

5. Հաշվետու տարվա ընթացքում Մ-ի և Դ-ի միջև իրականացվել են հետևյալ ներխմբային գործառնությունները.

ա) Դ-ն Մ-ին վաճառել է 750 միլիոն դրամի ապրանքներ՝ 30% շահութաբերությամբ:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Մ-ն նշված ապրանքներից իրացրել էր միայն 300 միլիոն դրամի ապրանքներ:

Մ-ն գնված ապրանքների դիմաց 31.12.2025թ. դրությամբ վճարել էր 600 միլիոն դրամ, որից 90 միլիոն դրամի վճարումը Մ-ն կատարել է 30.12.2025թ., որը սակայն Դ-ն ստացել և հաշվառել է հաջորդ տարի՝ 05.01.2026թ.:

բ) 2025թ. դեկտեմբերին Մ-ն Դ-ին վաճառել է 900 միլիոն դրամի հումք և նյութեր՝ 20% առևտրային վերադիրով:

Կապված ամանորյա տոների հետ, հումքի և նյութերի մուտքագրման փաստաթղթավորումն Դ-ն իրականացրել է հաջորդ տարի և ստացված հումքը և նյութերը հաշվառել է որպես պաշարներ՝ 08.01.2026թ.:

Դ-ն գնված ապրանքների դիմաց 31.12.2025թ. դրությամբ որևէ վճարում չէր կատարել:

գ) 01.07.2025թ. Դ-ն Մ-ին 20% շահութաբերությամբ վաճառել է հոսքագիծ՝ 900 միլիոն դրամով:

Ձեռքբերման ամսաթվի դրությամբ հոսքագծի օգտակար ծառայությունը գնահատվել է 6 տարի:

Մ-ն 2025 թվականի ընթացքում ամբողջությամբ մարել էր հոսքագծի ձեռքբերման դիմաց առաջացած կրեդիտորական պարտքը:

դ) Մ-ն Դ-ին տրամադրել է 600 միլիոն դրամի փոխառություն՝ տարեկան 14 տոկոս շուկայական տոկոսադրույքով: Փոխառությունը պետք է մարվի 5 տարի անց, իսկ յուրաքանչյուր տարվա տոկոսագումարները վճարվում են այդ տարում:

6. Մ-ն և Դ-ն 2025թ. դեկտեմբերին հայտարարել են շահաբաժիններ:

31.12.2025թ. դրությամբ Մ-ն Դ-ի կողմից հայտարարված շահաբաժինները իր ֆինանսական հաշվետվություններում չի արտացոլել: Դ-ն շահաբաժինների վճարումն իրականացրել է 30.04.2026թ.-ին:

Գործարքներից առաջացող հետաձգված հարկի գումարները խնդրում անտեսված են:

Պահանջվում է՝

Պատրաստել խմբի համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 31.12.2025թ. դրությամբ:

(Ընդամենը 20 միավոր)

Խնդիր 3.

Ստորև ներկայացված է Մուրացան ՓԲԸ-ի գլխավոր գրքից քաղվածք 31.12.2025թ. ավարտվող տարվա համար:

Հազար դրամ

Հոդված	Դեբետ	Կրեդիտ
Հասույթ		12,150
Վաճառքի ինքնարժեք	5,800	
Վարչական ծախսեր	5,450	
Իրացման ծախսեր	3,650	
Շահութահարկ (Ծնթ 3)	70	
Հետաձգված հարկային պարտավորություն 01.01.2025 (Ծնթ 3)		3,850
Պահուստ 01.01.2025 (Ծնթ 2)		2,300
Կուտակված շահույթ 01.01.2025		21,600
Կանոնադրական կապիտալ (1 բաժնետոմսը՝ 1 դրամ անվանական արժեքով) 01.01.2025		30,000
Ոչ նյութական ակտիվներ (Ծնթ 6)	1,650	
Ներդրումային գույք (Ծնթ 5)	9,500	
Ֆինանսական ծախսեր	700	
Ներդրումային եկամուտ		250
Միջանկյալ հաշիվ		23,250

Առկա է հետևյալ տեղեկատվությունը.

Ծանոթագրություն (1) — Պաշարների սխալ

Մուրացան ՓԲԸ-ն հայտնաբերել է, որ 31.12.2024թ-ի դրությամբ պաշարների վերջնական մնացորդը 2024 թ. ֆինանսական հաշվետվություններում գերազնահատված է 0.35 մլն դրամով: Սխալի ուղղման համար որևէ ձևակերպում դեռ կատարված չէ:

Ծանոթագրություն (2) — Դատական գործ (Պահուստ)

Պահուստը առնչվում է 2024 թ. դեկտեմբերից առկա դատական գործին: Մուրացան ՓԲԸ-ն 31.12.2025թ.-ին կնքեց հաշտություն՝ 3 մլն. դրամ գումարի փոխհատուցման դիմաց: Վճարված գումարի դեբետային ձևակերպումը կատարվեց միջանկյալ հաշվում:

Ծանոթագրություն (3) — Շահութահարկ

Գլխավոր գրքում շահութահարկ հոդվածի մնացորդը ներկայացնում է նախորդ ժամանակաշրջանի (2024 թ.) թերագնահատված/գերագնահատված պահուստը:

Ընթացիկ տարվա հարկը գնահատվում է որպես հարկի փոխհատուցում՝ 0.6 մլն. դրամ:

Բացի այդ, 31.12.2025-ի դրությամբ հետաձգված հարկային պարտավորությունը գնահատվում է 4.1 մլն. դրամ:

Ծանոթագրություն (4) — Բաժնետոմսերի արտոնյալ թողարկում

30.09.2025-ին Մուրացան ՓԲԸ-ն իրականացրեց 1-ը 4-ի դիմաց արտոնյալ թողարկում: Իրացման գինը կազմեց 3.5 դրամ մեկ բաժնետոմսի դիմաց: Ստացված մուտքերի դիմաց համապատասխան կրեդիտային ձևակերպումը կատարվեց միջանկյալ հաշվում:

Ծանոթագրություն (5) — Ներդրումային գույք

Մուրացան ՓԲԸ-ն 01.01.2025թ.-ին ձեռք բերեց ներդրումային գույք 10 մլն. դրամ կանխիկ վճարման դիմաց և որոշեց կիրառել իրական արժեքի մոդելը ներդրումային գույքի հաշվառման համար:

Ներդրումային գույքի ակնկալվող օգտագործման ժամկետը 20 տարի է և մաշվածությունը ճանաչվել է գծային մեթոդով: 31.12.2025թ-ի դրությամբ ներդրումային գույքի իրական արժեքը գնահատվել է 11 մլն. դրամ, սակայն այս մասով որևէ հաշվառում դեռ կատարված չէ: Ոչ ընթացիկ ակտիվների մաշվածության և ամորտիզացիայի ծախսերը ճանաչվում են վարչական ծախսերի կազմում՝ գծային մեթոդով: Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերում կամ օտարում այս ժամանակաշրջանում չի կատարվել:

Ծանոթագրություն (6) — Ոչ նյութական ակտիվներ — Ապրանքանիշեր

Մուրացան ՓԲԸ-ն ընթացիկ տարվա ընթացքում կատարել է մի շարք ծախսեր ապրանքանիշերի հետ կապված և կապիտալացրել է հետևյալ ծախսերը որպես ոչ նյութական ակտիվ:

Ա. 0.65 մլն. դրամ վճարում կատարվել է 01.04.2025թ-ին Մուրացան ՓԲԸ-ի խոշոր ապրանքանիշերից մեկի խթանման նպատակով: Այս ապրանքանիշը համարվում է անժամկետ կյանք ունեցող:

Բ. 1 մլն. դրամ վճարում կատարվել է 01.10.2025թ-ին մրցակցից ապրանքանիշ ձեռք բերելու նպատակով: Մուրացան ՓԲԸ-ն ակնկալում է, որ ապրանքանիշի օգտագործման ժամկետը 5 տարի է: Ընկերությունն 5 տարի անց նախատեսում է վաճառել ապրանքանիշը: Վաճառքի պահին ապրանքանիշի արժեքը գնահատվում է, որ աճած կլինի, այդ պատճառով ընթացիկ տարում ամորտիզացիա չի հաշվարկվել:

Ծանոթագրություն (7) — Շահաբաժին

Մուրացան ՓԲԸ-ն 31.12.2025թ-ին մեկ բաժնետոմսի դիմաց վճարել է 0,04 դրամ շահաբաժին՝ առկա բոլոր բաժնետոմսերի համար: Վճարված շահաբաժինը արձանագրվել է վարչական ծախսերի կազմում:

Պահանջվում է.

ա) Պատրաստել «Մուրացան» ՓԲԸ-ի շահույթ/վնասի մասին հաշվեքվությունը 31.12.2025թ. ավարտվող տարվա համար:

(12 միավոր)

բ) Պատրաստել «Մուրացան» ՓԲԸ-ի սեփական կապիտալի շարժի մասին հաշվեքվությունը 31.12.2025թ. ավարտվող տարվա համար:

(5 միավոր)

գ) Պատրաստել «Մուրացան» ՓԲԸ-ի դրամական հոսքերի մասին հաշվեքվությունից հետևյալ քաղվածքները 31.12.2025թ ավարտվող տարվա համար.

(i) Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր; և

(ii) Ֆինանսավորման գործունեությունից դրամական հոսքեր:

(3 միավոր)

(Ընդամենը 20 միավոր)

Խնդիր 4.

ա) Բաղադրյալ ֆինանսական գործիքներ

2025 հուլիսի 1-ին թողարկվել է 8,000,000 հազ. դրամի 10% փոխարկելի պարտատոմս: Տոկոսագումարը վճարվում է ամեն տարի հուլիսի 1-ին: Պարտատոմսերը կարող են մարվել 2028թ. հուլիսի 1-ին կամ փոխարկվել բաժնետոմսերի՝ պարտատոմսերը տիրապետողի ընտրությամբ՝ 10 բաժնետոմս յուրաքանչյուր 100 հազ. դրամ պարտատոմսի դիմաց սկզբունքով: Առանց փոխարկման իրավունքի նմանատիպ գործիքի տոկոսադրույքը տարեկան 12% է:

Ներկա արժեքի աղյուսակ՝

Տարի	1	2	3
10%	0.909	0.826	0.751
12%	0.893	0.797	0.712

Անուիտետի աղյուսակ՝

Տարի	1	2	3
10%	0.909	1.736	2.487
12%	0.893	1.690	2.402

Ինչպե՞ս և ի՞նչ գումարներով կներկայացնի ընկերությունը վերոնշյալ ֆինանսական գործիքը սկզբնական ճանաչման պահին, ինչպես նաև 2026թ. հունիսի 30-ին ավարտվող տարվա իր ֆինանսական վիճակի, ինչպես նաև շահույթի և վնասի մասին հաշվետվություններում:

(6 միավոր)

բ) Ֆինանսական ակտիվների դասակարգում

Ընկերությունն ունի հետևյալ ֆինանսական գործիքները՝

- 1) 5 տարի մարման ժամկետով 11% տոկոսադրույքով պետական պարտատոմս՝ տոկոսի ֆիքսված վճարումներով: Ընկերությունը այս պարտատոմսերը նախատեսում է պահել մայր գումարի և տոկոսագումարի ստացման, ինչպես նաև վաճառքի նպատակով:
- 2) 4 տարի մարման ժամկետով տրամադրված փոխառություն՝ փոխառուի տարեկան շահույթի 4% վճարումներով:
- 3) 10 տարի մարման ժամկետով 10% տոկոսադրույքով տրամադրված փոխառություն՝ տոկոսի ֆիքսված վճարումներով:
- 4) Այլ կազմակերպության բաժնային գործիք, որի դասակարգման վերաբերյալ որևէ կանխորոշում չի կատարել:
- 5) Այլ կազմակերպության թողարկած պարտատոմս, 3 տարի մարման ժամկետով 12% տոկոսադրույքով՝ տոկոսի ֆիքսված վճարումներով: Ընկերությունը այս պարտատոմսերը ձեռք է բերել վաճառքի նպատակով:

Ինչպե՞ս Ընկերությունը կդասակարգի վերոնշյալ ֆինանսական ակտիվները իր ֆինանսական հաշվետվություններում: Ներկայացնել դրանց հիմնավորումները:
(5 միավոր)

գ) Հետաձգված հարկեր

«Արմենիա» ընկերության հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը 2023թ.-ի դեկտեմբերի 31-ին կազմել է 410,000 հազ. դրամ, իսկ հարկային բազան՝ 330,000 հազ. դրամ:

2024թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ հայտնի է հետևյալը.

1. Տարվա վերջում հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմել է 560,000 հազ. դրամ, իսկ հարկային բազան՝ 370,000 հազ. դրամ: Տարվա ընթացքում որոշ ակտիվներ վերագնահատվել, որի արդյունքում արժեքը աճել է՝ 200,000 հազ. դրամով: Նախկինում որևէ ակտիվ չի վերագնահատվել: Ընկերության ակտիվների վերագնահատումները չեն ազդում ակտիվի հարկային բազայի կամ հարկվող շահույթի վրա: Վերագնահատումից առաջացած օգուտները հարկվում են վաճառքի պահին:
2. Տարվա ընթացքում ընկերությունը սկսել է նոր արտադրանքի մշակումը և, ՀՀՄՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտի համաձայն, կապիտալացրել է 60,000 հազ. դրամ: Ծախսը հարկային նպատակներով նվազեցվել է այն ժամանակ, երբ կատարվել է: Մինչև տարեվերջ այդ ծախսի որևէ մաս չի ամորտիզացվել:

Շահութահարկի դրույքաչափը 20% է: Տարվա ընթացիկ հարկային ծախսը հաշվարկվել է 85,000 հազ.:

Որոշել, թե ի՞նչ գումարներ պետք է ներկայացվեն ընթացիկ և հետաձգված հարկերի գծով՝

1. **Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում**
2. **Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:**

(7 միավոր)

դ) Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ

1. «Կապ» ընկերությունը 2025թ. նոյեմբերին որոշել է վերակազմակերպել արտադրական ստորաբաժանումը և ներգրավել է խորհրդատու-ինժեների՝ վերակազմակերպման իրագործելիության ուսումնասիրություն իրականացնելու համար: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությունը ստեղծել է 25,000 հազ. դրամի պահուստ՝ վերակազմակերպման ակնկալվող ծախսերի գծով:

Բացի այդ, վերակազմակերպումից հետո աշխատակիցների գործառույթները փոխվելու են, ուստի 2025թ. դեկտեմբերին ընկերությունը պայմանագիր է կնքել ուսումնական կազմակերպության հետ՝ 2026թ. հունվարին աշխատակիցների վերապատրաստումն իրականացնելու համար: Այդ ծախսի գծով 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ճանաչվել է 12,000 հազ. դրամի պահուստ:

2. «Կապ» ընկերությունը հույս ունի, որ արտադրական ստորաբաժանման վերակազմակերպումը կբարելավի որակի վերահսկողությունը: Ընկերությունը բոլոր ապրանքների համար տրամադրում է մեկ տարվա երաշխիք: Երաշխիքի գծով վերադարձների ցուցանիշը 12% է: Վերադարձված ապրանքների 5%-ը կարող է վերանորոգվել՝ յուրաքանչյուրի համար 5 հազ. դրամ արժեքով, իսկ մնացած 95%-ը խոտանվում է, և հաճախորդին վերադարձվում է 25 հազ. դրամ ամբողջ գումարը: 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում «Կապ» ընկերությունը վաճառել է 625,000 միավոր: Երաշխիքի գծով հաշվապահը դեռևս պահուստի գնահատական չի կատարել:
3. Հինգ տարի անց «Կապ» ընկերությունը պետք է ապամոնտաժի իր գործարանը և տարածքը վերադարձնի տեղական իշխանությանը: Ապամոնտաժման ծախսերի ներկա արժեքի գծով պահուստ ճանաչվել է գործարանի կառուցման պահին: 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ պահուստի սկզբնական մնացորդը կազմել է 1,650,000 հազ. դրամ: «Կապ» ընկերության կապիտալի արժեքը 8% է:

1. **ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ստանդարտի պահանջներին համապատասխան քննարկել 1-3-րդ կետերում նկարագրված յուրաքանչյուր դեպքը և որոշել, թե ո՞ր դեպքերի գծով պետք է ճանաչվի պահուստ, իսկ ո՞ր դեպքերի գծով՝ ոչ: Հիմնավորել պատասխանը:**

(4 միավոր)

2. **Հաշվարկել, թե 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ի՞նչ գումարի չափով պետք է ճանաչվի 2-րդ կետի՝ երաշխիքային պարտավորության գծով պահուստը:**

(3 միավոր)

(Ընդամենը 25 միավոր)

Խնդիր 5.

2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ «Վան» ՓԲԸ-ն գտնվում է պայմանագրային հետևյալ հարաբերություններում

Պայմանագիր 1: Սույն պայմանագիրը համապատասխանում է ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ» ստանդարտով սահմանված վարձակալության սահմանմանը և «Վան» ՓԲԸ-ին տրամադրում է հաստոցի օգտագործման իրավունքը:

Պայմանագրի համաձայն՝

- վարձակալության մեկնարկի ամսաթվին (2025 թվականի հունվարի 1-ին) ընկերությունը վճարում է 24,000 մլն դրամ կանխավճար,
- այնուհետև կատարում է հինգ հավասար տարեկան վճարում՝ յուրաքանչյուրն 66,000 մլն դրամ, որոնցից առաջինը վճարվում է 2025 թվականի դեկտեմբերի 31-ին,
- 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ ապագա վարձակալական վճարների ներկա արժեքը, հաշվի առած մեկնարկային կանխավճարը, կազմում է 240,000 մլն դրամ:
- Վարձակալությամբ ենթադրվող տոկոս սադրույքը որոշելի է, և կազմում է **11.65%**, իսկ վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը կազմում է **12.5%**

Պայմանագիր 2: Սույն պայմանագիրը համապատասխանում է ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ» ստանդարտով սահմանված վարձակալության սահմանմանը և «Վան» ՓԲԸ-ին տրամադրում է Ավտոմեքենայի օգտագործման իրավունքը՝ ինը ամիս ժամկետով: Հայտնի է որ՝

- Ավտոմեքենայի իրական արժեքը կազմում է 44,000 հազ. դրամ ,
- օգտակար ծառայության գնահատված ժամկետը՝ 5 տարի,
- պայմանագրի համաձայն՝ առաջին ամսում վճարում չի կատարվում,
- 2-9-րդ ամիսներին կատարվում է ամսական 1,760 հազ. դրամ վճարում:

«Վան» ՓԲԸ-ն ցանկանում է կիրառել ՖՀՄՍ 16-ով նախատեսված ճանաչման ազատումները:

Պայմանագիր 3: Սույն պայմանագիրը վաճառքի և հետադարձ վարձակալության գործարք է, որը վերաբերում է կտրող հաստոցին:

- Հաստոցը ձեռք է բերվել 2024 թվականի հունվարի 1-ին՝ 360,000 հազ. դրամով:
- 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ դրա հաշվեկշռային արժեքը կազմում է 300,000 հազ. դրամով:
- 2025 թվականի հունվարի 1-ին այն վաճառվել է «Արագած» ՓԲԸ-ին 444,000 հազ. դրամով, որը հավասար է դրա իրական արժեքին:
- Միաժամանակ «Վան» ՓԲԸ-ն նույն հաստոցը հետ է վարձակալել 5 տարի ժամկետով, որը հավասար է ակտիվի մնացած օգտակար ծառայության ժամկետին:

- Տարեկան վարձակալական վճարը կազմում է 96,000 հազ. դրամ:
- Վարձակալական վճարումների ներկա արժեքը կազմում է 420,000 հազ. դրամ:
- Գործարքը բավարարում է ՖՀՄՍ 15 «Հասույթ գնորդների հետ պայմանագրերից» ստանդարտով վաճառքի ճանաչման չափանիշները:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ հարցերի պատասխանները՝

1. ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ» ստանդարտի՝ վարձակալության սկզբի ամսաթվի դրությամբ օգտագործման իրավունքի ձևով ակտիվի սկզբնական արժեքի չափմանը վերաբերող դրույթները:

(2 միավոր)

2. Երկրորդ պայմանագրի դեպքում, վարձակալության սկզբի ամսաթվի դրությամբ, ի՞նչ գումարով պետք է սկզբնապես ճանաչվի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը:

(2 միավոր)

3. Ներկայացնել ճանաչումից ազատումների դեպքերը, երբ Վարձակալը կարող է ընտրել չկիրառել օգտագործման իրավունքի ձևով ակտիվի և վարձակալության գծով պարտավորության ճանաչման պահանջները: Այս դեպքում, ինչպե՞ս կհաշվառվի վարձակալության տվյալ պայմանագրերը:

(2 միավոր)

4. Երրորդ պայմանագրի գծով որքա՞ն շահույթ պետք է ճանաչվի 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ վաճառքի և հետադարձ վարձակալության արդյունքում:

(3 միավոր)

5. Առաջին պայմանագրի գծով՝

ա) Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, ի՞նչ գումարով պետք է սկզբնապես ճանաչվի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը:

բ) Որքա՞ն է վարձակալության պարտավորությունների գծով տոկոսային ծախսը, որը ճանաչվել է շահույթում կամ վնասում 2026թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

գ) Ներկայացնել, թե որքան կկազմի 2027թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության գծով պարտավորությունը

(6 միավոր)

(Ընդամենը 15 միավոր)